ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2023թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՂՈՒԿԱՍ ՉՈՒԲԱՐՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ՍՈՒՐԲ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆԸ ՔՈ» ԱՐՁԱՆԻՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 14-ի N 243-Ա/2 հարամանով ստեղծված հանձնաժողովի առաջարկը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ մեծանուն քանդակագործ, Հայաստանի ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Ղուկաս Չուբարյանի հեղինակած «Սուրբ եղիցի անունը Քո» արձանը Երևան քաղաքի Մանկական այգում տեղադրելու համար՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2023 թվականի ապրիլի 18-ի
N --- Ա որոշման





մաշտաբ 1: 2000

0 0.5m 1m 2.5m 5m

1 : 50

Նշումներ -Էջ 03	
6	Զինվորի քանդակի համար առաջարկված դիրքը:
7	Կարմիր բանակի հուշարձան
8	Նելսոն Ստեփանյանի արձան
9	Սիմոն Զաքյանի կիսանդրին

ԷՆ 03	Զբոսայգու հատակագիծ - Ներկայացուցիչ
	Զինվորի հուշարձան

Նմանակ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՂՈՒԿԱՍ ՉՈՒԲԱՐՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ՍՈՒՐԲ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆԸ ՔՈ» ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ, հայ մեծանուն քանդակագործ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Ղուկաս Չուբարյանի ծննդյան 100-ամյակը նշելու նպատակով ստեղծվել է հոբելյանական հանձնաժողով, որտեղ ներկայացվածություն ունի նաև քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունը: Հանձնաժողովի նիստի ընթացքում (14.03.23) առաջարկվեց քանդակագործի «Սուրբ եղիցի անունը Քո» արձանի տեղադրման հնարավոր վայր դիտարկել Մանկական այգու տարածքը (տեղանքի հստակ հատվածը կցված է): Հատկանշական է, որ արձանի նույնանման օրինակը գտնվում է Մոսկվայի Տրետյակովի անվան պատկերասրահում: Արվեստագետի ընտանիքը պատրաստ է Երևան քաղաքին նվիրել սույն մեծարժեք քանդակը, իսկ Երևանի քաղաքապետարանը իր միջոցներով կկառուցի սույն քանդակի համար նախատեսված պատվանդանը:

Ղուկաս Չուբարյանը ծնվել է 1923թ. հունիսի 16-ին Երևանում: Ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը (1942թ.), այնուհետև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը (1947թ.), որից հետո Երևանի պետական գեղարվեստա-թատերական ինստիտուտը (1950թ.): Դասավանդել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում (1950-1955թթ.), 1968 թվականից՝ Երևանի մանկավարժական ինստիտուտում: Երևանի գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիայի պրոռեկտոր է եղել 1996 թվականից: Արժանացել է Մովսես Խորենացի մեդալի (2003թ.):

Ղ. Չուբարյանը հեղինակել է Երևան քաղաքի Մատենադարանի ճարտարապետական համալիրում տեղակայված Մեսրոպ Մաշտոցի և Մխիթար Գոշի արձանները, Ազատության հրապարակում գտնվող Ալեքսանդր Սպենդիարյանի, ինչպես նաև Հովհաննես Թումանյանին և Եղիշե Չարենցին նվիրված քանդակները: Ղ. Չուբարյանի ստեղծագործությունները գտնվում են Հայաստանի ազգային պատկերասրահի և վերջինիս մարզային մասնաճյուղերի, ինչպես նաև Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի հիմնական թանգարանների հավաքածուներում:

Չուբարյանը մահացել է 2009թ. մարտի 23-ին Երևանում:

Կարևորելով մեծանուն հայ արվեստագետի արժանվույնս գնահատման, ստեղծագործական ժառանգության արժևորման և հանրահռչակման, նրա հիշատակը հավերժացնելու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՂՈՒԿԱՍ ՉՈՒԲԱՐՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ՍՈՒՐԲ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆԸ ՔՈ» ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ղուկաս Չուբարյանի հեղինակած «Սուրբ եղիցի անունը Քո» արձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՂՈՒԿԱՍ ՉՈՒԲԱՐՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ՍՈՒՐԲ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆԸ ՔՈ» ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ղուկաս Չուբարյանի հեղինակած «Սուրբ եղիցի անունը Քո» արձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ